

MEMBERS OF THE BOARD

RICHARD A. VLADOVIC, Ed.D., PRESIDENT
TAMAR GALATZAN
MONICA GARCIA
BENNETT KAYSER
MARGUERITE POINDEXTER LAMOTTE
MONICA RATLIFF
STEVEN ZIMMER



LOS ANGELES UNIFIED SCHOOL DISTRICT

Administrative Office
333 South Beaudry Avenue, 24th Floor
Los Angeles, California 90017
Telephone: (213) 241-7000
Fax: (213) 241-8442

JOHN E. DEASY, Ph.D.
SUPERINTENDENT OF SCHOOLS

December 6, 2013

Հարգելի Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանի ծնողներ/խնամակալներ՝

Այս նամակը տրամադրում է տեղեկություններ ծրագրային պահանջների և նոր հաշվետվողականության համակարգի մասին, որը Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանը (ԼԱՄՂԵ) կիրականացնի վերջերս *No Child Left Behind* (NCLB) դաշնային օրենքի որոշ ասպեկտների վերաբերյալ “բացառության իրավունքը” ստանալու արդյունքում: Այս նամակը նկարագրում է/ նախանշում է, թե ինչպես է բացառության իրավունքը օգնում է մեր աշակերտներին, սահմանում է այն հիմնական սկզբունքները, որոնք շրջանը պետք է իրականացնի և նկարագրում է, թե ինչ ազդեցություն պետք է ունենա այս նոր համակարգը ձեր երեխայի դպրոցի վրա:

ԼԱՄՂԵ - ն շարունակում է աշխատել մեր դպրոցների բոլոր ավարտած աշակերտների քոլեջին և աշխատանքին պատրաստվածության վրա: Այս գործին աջակցելու համար, ԼԱՄՂԵ միացել է յոթ այլ Կալիֆոռնիայի դպրոցական շրջաններին (Ֆրեզնո, Լոնգ Բիչ, Օուքլենդ, Սակրամենտո Սիթի, Սան Ֆրանցիսկո, Սանգեր և Santa Անա), կազմելով կոնսորցիում, որը հայտնի է որպես Կրթության բարեփոխումների կալիֆոռնիայի գրասենյակ (CORE): CORE-ի շրջանները միացել են բարեփոխումների ազգային շարժմանը դիմելով “բացառության իրավունքի” համար *No Child Left Behind* (NCLB) հաշվետվողականության դաշնային ծրագրի որոշ ասպեկտների վերաբերյալ, և ստանալ է այն: Բացի CORE-ից, այդ “բացառության իրավունքը” ստացել են երկրի գրեթե բոլոր նահանգները ավելի ճկուն պայմաններ ստեղծելու համար, որպեսզի դպրոցներին աջակցություն ցուցաբերվի ըստ անհրաժեշտության, և փոփոխությունները հաստատելու համար:

“Բացառության իրավունքը” օգնում է ԼԱՄՂԵ-ին և իր աշակերտներին տարբեր ձևերով: “Բացառության իրավունքը”.

- նախատեսում է ուսումնական առաջադիմությունը գնահատելու ոչ միայն ստանդարտացված քննության արդյունքների հիման վրա
- թույլ է տալիս շրջանին ինքնուրույն որոշել, թե ինչպես օգտագործել Title I միջոցների որոշ մասը՝ ամենաշատ կարիք ունեցող դպրոցներին աջակցելու համար
- պահպանում է շրջանի և նրա դպրոցների պատասխանատվությունը *բոլոր* աշակերտների հանդեպ, որոշելով առաջադիմության մեջ տարբերությունը, նույնիսկ այն ժամանակ, երբ դպրոցի տվյալ ենթախմբում (օրինակ՝ անգլերեն սովորողների կամ հատուկ ուսուցում ստացող աշակերտների) սովորում են ընդամենը 20 աշակերտ
- անմիջականորեն աջակցում է դպրոցական շրջանի ընթացիկ աշխատանքին ուղղված մեր դպրոցներում Ընդհանուր հիմնական պետական ստանդարտների իրականացնելու և ուսուցչի և ղեկավարի աշխատանքի արդյունավետությունը ապահովելու վրա
- թույլ է տալիս ԼԱՄՂԵ-ին հանդես գալ որպես CORE-ի անդամ և ապահովել հետադարձ կապ, որի արդյունքը կարող է ազդել հաշվետվողականության համակարգի աշխատանքի վրա և “բացառության իրավունքը” իրականացնելու վրա:

ԼԱՄՂԵ որպես CORE-ի շրջան հաշվետու է լինելու նոր Դպրոցների որակի բարելավման համակարգին (SQIS), առաջնորդվելով երեք կարևոր սկզբունքներով, որոնք պետք է պահպանվեն բոլոր դպրոցներում.

1. **Սկզբունք I: *Բոլոր աշակերտների պատրաստվածությունը քոլեջին և աշխատանքին*** – արագացնում է դպրոցական շրջանի անցում Ընդհանուր հիմնական պետական ստանդարտներին, ինչը փոխում է

դասավանդումը և սովորելու ընթացքը այնպես, որ աշակերտները ավելի լավ պատրաստվեն քոլեջին և աշխատանքին

2. **Սկզբունք II: Դիֆերենցիալ կարգավիճակ, հաշվետվողականություն և աջակցություն** – գնահատում է դպրոցի աշխատանքը տարբեր եղանակներով (օրինակ՝ դասընթացներ, սոցիալական/զգացմունքային ասպեկտ և դպրոցի մթնոլորտ): Չնայած բոլոր դպրոցները պետք է գնահատվեն այս համակարգում, միայն Title I դպրոցները կստանան այնպիսի դասակարգում, որի շնորհիվ դիֆերենցիալ է իրենց կարգավիճակը, հաշվետվողականությունը և աջակցությունը: Նոր հաշվետվողականության միջոցը կոչվում է Դպրոցների որակի բարելավման ինդեքս (SQII).
3. **Սկզբունք III: Արդյունավետ ուսուցման և դեկավարման աջակցում** – շարունակում է բարելավել դասավանդումը, դեկավարումը և ուսումը, ստեղծելով մասնագիտական, համագործակցային կուլտուրա աշխատակազմի, ծնողների և աշակերտների միջև:

Ձեր երեխայի դպրոցը չունի դասակարգում ըստ նոր համակարգի, քանի որ դպրոցում առաջադիմությունը բավականաչափ լավ է “Focus”, “Priority” կամ “Support” կարգավիճակը ստանալու համար, բայց ոչ այդքան բավարար, որպեսզի դա համարվի “Reward” դպրոց: Թեև ձեր երեխայի դպրոցը չի դասակարգվել ըստ նոր համակարգի, քանի որ բոլոր աշակերտները բարձր առաջադիմություն ունեն, դպրոցում դեռ շատ աշխատանք պետք է արվի:


Բացի այդ, նախորդ NCLB հաշվետվողականության համակարգին համաձայն, Title I դպրոցները, որոնք ըստ ստանդարտացված քննության արդյունքների չեն ունեցել «անհրաժեշտ տարեկան առաջադիմություն», որակավորվում էին որպես “Program Improvement” (PI) դպրոցներ: Երկու տարի որպես PI դպրոց որակավորվելուց հետո՝ NCLB-ին համաձայն, համապատասխանող աշակերտներին առաջարկվում էին Լրացուցիչ կրթական ծառայություններ (SES), այսինքն, անվճար ուսուցում այլ ծառայությունների կողմից: Ըստ նոր հաշվետվողականության համակարգի, դպրոցները այլևս չեն որակավորվում որպես PI, և այդ ծառայությունները այլևս չեն նախատեսվում և չեն առաջարկվում: Չնայած անվճար ուսուցման ծառայություններ այլևս չեն տրամադրվելու, ձեր երեխայի դպրոցը, հանդիսանալով Title I դպրոց, կստանա լրացուցիչ հատկացումներ: Դպրոցի տեղային խորհուրդը կորոշի, թե ինչպես են այդ միջոցները բաշխվելու, և կարող է տրամադրել արտադպրոցական ուսուցում և այլ միջոցներ համապատասխան աշակերտների համար:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ակտիվ ծնողական մասնակցությունը օգնում է աշակերտներին հաջողության հասնել դպրոցում: Ծնողները, որոնք ցանկանում են գործակցել դպրոցի հետ, կարող են դիմել դպրոցի աշխատակիցներին հետևյալ կետերի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար.

- Ծնողների մասնակցության կանոններ
- “Դպրոց – Ծնող” պայմանագիր
- Ընթացիկ ծնողական ժողովներ
- Խորհրդատվական կոմիտեների/Դպրոցի տեղական խորհրդի ժողովներ
- Ծնողների կամավորական հնարավորություններ

Քանի որ բոլոր դպրոցները շարունակում են իրենց աշխատանքը վարել Շրջանի ստրատեգիական ծրագրին համաձայն, որը դիտավորյալ համապատասխանեցվել է “բացառության իրավունքի” երեք սկզբունքներին, ծնողներին/խնամակալներին կտրամադրվի լրացուցիչ նոր տեղեկատվություն CORE-ի “բացառության իրավունքի” որոշ դրույթների մասին: Մենք անհամբեր սպասում ենք ձեզ հետ համագործակցելուն:

Հարգանքներով,



Ինժուր John E. Deasy
Վերականգնող Դպրոցներ